

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/2

14 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.08.2014 թ-ի թիվ 5010232 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 07.07.2014 թ-ի թիվ 5010232 հանձնարարագրի համաձայն «ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.08.2014 թ-ի թիվ 5010232 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտի դեմ «ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ կողմից Հանձնաժողովին ներկայացվել է գանգատ: Այնուհետև, «ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ տնօրենի կողմից Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 10.10.2014 թ-ի գրությամբ միջնորդություն է ներկայացվել՝ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.08.2014 թ-ի թիվ 5010232 ստուգման ակտի դեմ բերված գանգատը առանց քննության թողնելու վերաբերյալ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի, «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

...

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:


Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«ԴՖ Դիստրիբյուշն» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ